Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

3350

1903. № 1521.

ՄԱԿՍԻՄ ԳՈՅՐԿԻՑ

26 ՏՂԱՄԱՐԴ ԵՒ 1 ԱՂՋԻԿ

Թարգմանեց

ՄՈՒՇԵՂ ՎԱՐԴԱՊԵՏ

БИБЛИОТЕКА
ИН-ТУТА
ВОСТОКОВЕДЕНИЯ
Академии Наук
СССР

ПЕЧАТЬ АЗІАТСКАГО МУЗЕЯ
SIG. MUS. ASIAT. C. A. E.

ԳԻՆԸ Է 5 ԿՊԵ.

891.71
Գ-83

1903

ՏՊԱՐԱՆ
Մ. ՎԱՐԴԱՆԵԱՆՑԻ

891.71
Գ-83

10 NOV 2005
27 AUG 2006

ՄՈՎՍԻՍ ԳՈՅՐԻՆՑ

ՔՍԱՆԵԻՎԵՑ ՏՂԱՄԱՐԴ ԵՒ ՄԻ ԱՂՋԻԿ

БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ВОСТОКОВЕДЕНИЯ
Академии Наук
СССР

Թարգմանեց

ՄՈՒՇԷ ՎԱՐԴԱՊԵՏ

ԹԻՖԼԻՍ
Տպարան Մովսէս Վարդանեանցի
1903

21 MAR 2013
10803

Дозволено Цензурою. 11 Іюня 1903 г. Тифлисъ.

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
ГСС. Библиотека
ՀԱՍՍՌ-Арм.ССР
60991-67

ՔՍԱՆԵՎԵՑ ՏՂԱՄԱՐԴ

ԵՒ ՄԻ ԱՂՋԻԿ

Մենք քսանվեց հոգի էինք—քսանվեց կենդանի մեքենայ, որ խոնաւ ներքնայարկում փակուած, առաւօտից մինչև իրիկուն, խմոր էինք հունցում և բոկեղ *) ու հաց-օղակ պատրաստում։ Մեր ներքնայարկի պատուհանները դէմ էին ընկած նրանց առաջ փորուած փոսին, որ ծածկուած էր խոնաւութիւնից բորբոսնած աղիւսներով. պատուհանի շրջանակները դրսից պատած էին երկաթեայ խիտ վանդակով, և արևի լոյսը չէր կարող ներս թափանցել ապակիների միջից, որոնք ալիւրի փոշով էին ծածկուած։ Մեր աղան պատուհանները նրա համար էր երկաթով պատել, որ մենք չկարողանանք նրա հացը տալ աղքատ-

*) Կրկնդէլ։

ներին և մեր ընկերներից նրանց, որոնք անգործ մնացած լինելով քաղցած էին. մեր տէրը մեզ կոչում էր սրիկայ և ճաշերքին մսի տեղակ հոտած ընդերք էր տալիս։

Շատ նեղուածք էր, և մենք խեղդւում էինք այդ քարէ արկղի մէջ, ցած ու ծանր առաստաղի ներքև, որը ծածկուած էր մրով ու սարդի ոստայնով։ Ծանր և սիրտ խառնելու բան էր այս ցեխի ու բորբոսի բծերով ծածկուած հաստ պատերի միջև մնալը...։ Առաւօտեան ժամը հնգին, դեռ քնից չկշտացած, վեր էինք կենում տեղներից և—բթացած, անտարբեր—ժամը վեցին նստում էինք սեղանի առաջ, որպէս զի բոկեղ չլինենք այն խմորից, որ մեր ընկերները, դեռ մեր քնած միջոցին, պատրաստած էին լինում։ Եւ ամբողջ օրն առաւօտից մինչև երեկոյեան ժամը տասը մեզանից ոմանք, սեղանի առաջ նստած, ձեռներով առաձգական խմորն էին բաց անում ու օրօրւում էին, որպէս զի չընդարմանան, իսկ միւսներն այդ միջոցին ջուր ու ալիւրից խմոր էին հունցում։ Եւ ամբողջ օրը ջուրը մտախոհ ու ախուր թշշում էր կաթսայի մէջ, ուր բոկեղներն էին խաշւում, իսկ հացթուխի թիակը, խմորի լպրծուն կտորները տաք ալիւրի վրայ ձգելիս, շորացած ու արագ-արագ խըշխշում էր փուռի յատակին քսուելուց։ Առաւօտից մինչև իրիկուն փռան մէջ մի կողքին

վառւում էր փայտը, և բոցի կարմիր շողքը դողդողում էր արհեստանոցի պատի վրայ և կարծես մեզ վրայ անձայն ծիծաղում։ Ահագին փուռը նման էր առասպելական հրէշի այլանդակ գլխի,—հէնց իմանաս այդ գլուխը դուրս էր պրծած յատակից, բաց արել պայծառ կրակով լի ահագին բերանը, ասես հնչում մեզ վրայ և իւր ճակատին դանուած երկու օդանցների խաւար խոռոչներով դիտում մեր անվերջ աշխատանքը։ Այդ երկուխոր խոռոչները նման էին աչքերի—հրէշի անգութ ու անտարբեր աչքերի—որոնք շարունակ միատեսակ մութ հայեացքով նայում էին մեզ և, ասես թէ տարուկների վրայ նայելուց յոգնած ու նրանցից ոչ մի մարդկային բան չսպասելով, իմաստութեան սառն արհամարհանքով արհամարհում էին նրանց։

Ատծու իր օրը ալիւրի փոշու մէջ, ցեխի մէջ, որ մենք ոտներովս բերում էինք բակից, ծանր հոտի մէջ յուլում էինք խմորը և մեր քրտնքով շաղախած՝ բոկեղ շինում, և մենք սուր ատելութեամբ ատում էինք մեր աշխատանքն ու երբէք չէինք ուտում այն, որ մեր ձեռքիցն էր դուրս գալիս. մենք սև հացը դերադասում էինք բոկեղներից։ Երկայն սեղանի առաջ իրար դէմ ու դէմ նստած—լինը հոգի լինի դէմ—երկար ժամեր մեքենաբար շարժում էինք ձեռքներս ու մատներս, և այնքան էինք

ընտելացել մեր գործին, որ այլևս երբէք չէինք հետևում մեր շարժումներին։ Եւ այնքան էինք իրար դիտել, որ ամեն մէկս էլ արդէն խիստ լաւ գիտէինք մեր ընկերների դէմքի ամեն մի կնճիռը։ Մենք այլևս խօսելու ոչինչ նոր նիւթ չունէինք և, այդ բանին վարժուած, բոլոր ժամանակը նստած էինք լինում լուռ, եթէ միայն իրար չէինք հայհոյում—քանի որ մարդ հայհոյելու, մանաւանդ ընկեր հայհոյելու համար միշտ կարելի է մի պատճառ գտնել։ Բայց մենք հէնց քիչ էլ կուում էինք,—ինչ մեղք պիտի ունենայ մի մարդ, քանի որ նա կիսամեռ է, քանի որ նա անշունչ արձան է, քանի որ ծանր աշխատանքը ճնշել է նրա բոլոր զգացմունքները։ Բայց լռութիւնը զարհուրելի է և չարատանջ միայն այն մարդկանց համար, որոնք արդէն ամեն բան ասել, պրծել են և էլ ոչինչ չունին ասելու. իսկ այն մարդկանց համար, որոնք դեռ իրենց ասելիքը չեն սկսել,—նրանց համար լռելը հասարակ ու թեթև բան է... Բայց երբեմն մենք երգում էինք, և մեր երգն այսպէս էր սկսւում՝—աշխատանքի միջոցին յանկարծ մեզանից մէկը յոգնած ձիու հառաչի նման թառանչ կը քաշէր և կամացուկ կը սկսէր երգել այն ծանր երգերից մէկը, որոնց սրտամորմոք-փաղաքուշ եղանակները միշտ երգողի սրտի վրայից դէն են ձգում ծանր քարը։ Մեզանից մէկը կը սկսէր երգել,

իսկ մնացեալները սկզբում լուռ ականջ կը դնէինք նրա մենակ երգածին, և երգը կը մաբէր ու կուլ կը գնար ներքնայարկի ծանր առաստաղի տակ, նման աշնանային խոնաւ դիշերով տափաստանում վառած փոքրիկ կրակին, երբ մառախլապատ երկինքն արձակ խուփի նման կախ է ընկած լինում երկրիս վրայ։ Յետոյ երգողին կը միանար երկրորդը, և ահա արդէն երկու ձայն կամաց ու թախծալից լողում է մեր նեղուածք փոսի հեղձուկ օդի մէջ։ Եւ ապա յանկարծ մի քանի ձայն մի անգամից կը միանային երգին, ու երգն ալիքի նման կեռաբ, աւելի զօրեղ, աւելի բարձր կը դառնար և ասես թէ մեր քարէ բանտի խոնաւ, ծանր պատերը կը բանար, կը հեռացնէր մեզանից...։

Բոլոր քսանեվեց հոգիս էլ երգում էինք. բարձր, հաստատուն ձայները լցնում էին արհեստանոցը. բայց երգի համար նեղ էր գալիս դա. երգը զարնւում էր պատերի քարին, հառաչում էր, լաց լինում և սրտերը կենդանացնում խաղաղ խոստացնող ցաւով, բաց անում հին վէրքերն ու կսկիծ պատճառում...։ Երգողները խորն ու ծանր հոգոց կը հանէին. նրանցից մէկը յանկարծ կը կտրէր երգն ու երկար ականջ կը դնէր ընկերների երգածին, և ապա նորից ձայնը կը միացնէր ընդհանուր ալիքին։ Մի ուրիշն անձկութեամբ «ա՜խ» կը

կանչէր և աչքերը փակած կերգէր, ու գուցէ ձայների այս թանձր, ընդարձակ ալիքը նրա առաջ պատկերանում էր որպէս մի հեռաստան տանող ճանապարհ, պայծառ արևի լուսով լուսաւորուած մի լայն ճանապարհ, իսկ իրեն էլ տեսնում էր այդ ճանապարհի վրայ...:

Փռան միջի կրակը շարունակ զողզողում է, հայթուխի թիակը դարձեալ խշխշում է աղիւսին քսուելով, ջուրը մրմռում է կաթսայի մէջ, և կրակի շողքը նոյնպէս զողում է, անձայն ծիծաղում...: Իսկ մենք ուրիշի բառերով երգում ենք մեր բութ վիշտը, արևից զրկուած կենդանի մարդկանց ծանր վիշտը, ստրուկների անձկութիւնը: Ահա այսպէս էինք ապրում մենք, քսանվեց հոգիս, քարաշէն ահագին տան գետնայարկում, և այնքան ծանր էր մեր կեանքը, որ ասես թէ այդ տան երեք յարկն էլ մեր ուսերին լինէր շինած...:

Սակայն երգից զատ մենք ունէինք նաև մի ուրիշ լաւ բան, մի սիրելի բան, մի այնպիսի բան, որը գուցէ և արևի տեղն էր բռնում մեզ համար: Այդ տան երկրորդ յարկում կարուձևի մի արհեստանոց կար, և այդտեղ, շատ վարպետ-աղջկերանց հետ, ապրում էր

նաև մի տասնվեց տարեկան սպասուհի, Տանիա անունով: Մեր արհեստանոցի՝ դէպի նախասենեակ բացուող դրան մէջ մի փոքրիկ պատուհան կար շինուած: Ամեն առաւօտ այդ պատուհանի ապակուն յենւում էր Տանիայի կապոյտ, ուրախ աչքերով փոքրիկ, վարդագոյն դէմքը, և հնչուն, փաղաքուշ ձայնով կանչում.

—Կալանաւորներ. ինձ բոկեղ տուէք:

Մենք ամենքս էլ շուտ էինք գալիս դէպի այս ծանօթ պարզ ձայնը և ուրախ-ուրախ, բարեսիրտ կերպով նայում կուսական մաքուր երեսին, որ հրաշալի կերպով ժպտում էր մեզ: Մենք սովոր էինք, և մեզ հաճելի էր տեսնել ապակուն հուպ տալուց տափակած քիթը և մանր, սպիտակ ատամները, որոնք փայլում էին ժպտալուց բացուած վարդագոյն շրթունքների արանքից: Մենք իրար բոթբոթելով վազում էինք դուռը բանալու, և ահաւասիկ նա գուարթ, քաղցր մտնում էր ներս, գոգնոցը զէմ անում, գլուխը փոքր ինչ թեքած կանգնում ու շարունակ ժպտում: Զադանակագոյն մազերի երկայն ու հաստ հիւսն ուսի վրայով ընկած էր լինում կրծքին: Մենք, կեղտոտ, մութ, այլանդակ մարդիկս, ներքևից վերև էինք նայում նրան,—դրան շեմքը յատակից չորս ասպիճան վեր էր,—գլուխներս բարձրացրած նայում էինք նրան, բարի-լոյս տալիս, մի ինչ-

որ առանձին խօսքեր ասում. մենք այդպիսի խօսքերը միայն նրա համար էինք գտնում մեր մէջ։ Նրա հետ խօսելիս մեր ձայներն էլ աւելի մեղմ էին, հանգիստներս էլ թեթև։ Նրա համար մեր ամեն ինչն էլ ջոկ տեսակ էր։ Թրխողը փոնից հանում էր ամենալաւ թխուած, կարմրած բոկեղները և ճարպիկութեամբ ձգում նրա զգնոցի մէջ։

—Տես, աղի աչքովը չընկնես,—միշտ զգուշացնում էինք նրան։

Նա խորամանկութեամբ կը ծիծաղէր, ուրախ-ուրախ կասէր.

—Մնաք բարով, կալանաւորներ, — և մկան նման խոյսն կանհետանար։

Այսքան միայն...։ Բայց նրա գնալուց յետոյ մենք երկար ժամանակ հաճոյքով կը խօսէինք նրա մասին, և միշտ էլ խօսածներս նոյնն էր, ինչ որ խօսած էինք երեկ ու առաջ, քանի որ նա էլ, մենք էլ և մեր շորս կողմն ամեն բան էլ այն էր, ինչ որ էր երեկ և առաջ...։ Շատ ծանր ու չարաստանջ բան է լինում, երբ որ մարդս ապրում է, իսկ նրա շուրջը ոչինչ չի փոխւում. եթէ այս բանս բոլորովին չսղանի նրա հոգին, գոնէ քանի երկար ապրի՝ այնքան չարաստանջ կը դառնայ նրա համար շրջապատի անշարժութիւնը...։ Մենք միշտ կանանց մասին մի այնպիսի լեզուով էինք խօսում, որ երբեմն նոյն իսկ ինքներս էլ զզւում էինք մեր կոպիտ-անպատկառ խօսքերից, և այդ հասկանալի է, քանի որ մեր այդ ծանօթ կանայք գուցէ և ուրիշ տեսակ խօսքերի արժանի էլ չէին։ Բայց Ցանիայի համար երբէք վատ չէինք խօսում. ոչ միայն մեղանից ոչ ոք և երբէք իրեն չէր թոյլ տալ նրան ձեռք կպցնելու, հապա նա նոյն իսկ մի ազատ կատակ անգամ լսած չէ մեղանից։ Գուցէ սա այն պատճառով էր, որ նա երկար չէր մնում մեզ մօտ՝—վայր ընկնող աստղի նման կը փայլէր մեր առաջ ու կանհետանար, բայց գուցէ և այն պատճառով էր, որ նա փոքր էր և շատ գեղեցիկ, իսկ ամեն մի գեղեցիկ բան, նոյն իսկ կոպիտ մարդկանց մէջ, յարգանք է ծնեցնում դէպի իրեն։ Եւ մէկ էլ՝ թէպէտ տաժանակիր աշխատանքը մեզ բթացրել էր, բայց և այնպէս հո դարձեալ մարդ էինք և, ինչպէս ամեն մարդ, չէինք կարող առանց մի որևիցէ բան պաշտելու ապրել։ Մեզ համար նրանից լաւը չկար, և ոչ ոք, բացի նրանից, մեզ՝ ներքնայարկում ապրողներիս վրայ ուշադրութիւն չէր դարձնում, ոչ ոք, թէպէտ և այդ տան մէջ տասնաւոր մարդիկ էին ապրում։ Եւ վերջապէս—անշուշտ, գլխաւորն էլ սա էր—մենք ամենքս էլ նրան մի տեսակ մեզն էինք համարում, մի տեսակ մեր բոկեղների շնորհիւ լոկ գոյութիւնը պահպանող էինք կարծում. ուստի մեր պարտա-

կանութիւնն էինք համարում տաք բոկեղներ տալ նրան։ Եւ այս բանը մեզ համար դարձել էր մի տեսակ հանդիսաւոր գոհ, համարեա մի սրբազան ծէս, որ մատուցանում էինք մեր պաշտաման առաջին և որոնցով օր օրի վրայ աւելի ևս սերտ կերպով կապւում էինք նրա հետ։ Բացի բոկեղներից մենք Տանիային շատ էլ խրատներ էինք տալիս—որ տաք հագնուի, ատիճաններով արագ չվազէ, փայտի ծանր կապոցներ չվերցնէ։ Նա ժպիտը երեսին լսում էր մեր խորհուրդները, պատասխանի փոխարէն ծիծաղում և երբէք մեր խօսքին ականջ չէր անում. բայց մենք այդ բանից չէինք վիրաւորւում. մենք ուզում էինք միայն նրան ցոյց տալ, որ նրա վրայ հոգս ենք տանում։

Շատ անգամ զանազան բաներ էր խնդրում նա, խնդրում էր, օրինակ, բաց անել նկուղի ծանր դուռը, փայտ ջարդել, և մենք բոլոր նրա խնդրածն ուրախութեամբ, նոյն իսկ պարծանքով կատարում էինք։

Բայց երբ մի օր մեզանից մէկը նրան խնդրեց, որ կարկատէ իւր միակ շապիկը, նա արհամարհանքով փրթիկացրեց ու ասաց.

—Էդ էր պակաս։ Ո՞նց չէ. հիմի պիտի քու...

Մենք շատ ծիծաղեցինք այդ խենթի վրայ և այլևս երբէք ոչ մի բան չխնդրեցինք

աղջկանից։ Մենք նրան սիրում էինք. սրանով ամեն բան ասուած է։ Մարդս միշտ ուզում է, որ մէկին սիրի, թէպէտև նա իւր սիրովը ճնշում է, երբեմն կեղտոտում է նրան. նա կարող է իւր սիրովը թունաւորել իւր սրտին մօտիկ անձի կեանքը, քանի որ, սիրելով, չես յարգում սիրածիդ։ Մենք պէտք է սիրէինք Տանիային, որովհետև ուրիշ սիրելու բան չունէինք։

Երբեմն, չգիտես ինչու, յանկարծ մեզանից մէկը կը սկսէր դատողութիւն անել.

—Ի՞նչ ենք աղջկանը էսքան երես տալիս։ Ի՞նչ մի զատ է որ, հը՞։ Շատ ենք փայփայում։

Ով որ համարձակւում էր այդպիսի բաներ ասել, մենք խսկոյն և եթ կոպիտ կերպով լռեցնում էինք. մեզ մի բան էր պէտք, որ սիրէինք, և մենք դաել էինք այդ ու սիրում էինք. իսկ այն, ինչ որ սիրում էինք մենք՝ քսանվեցս, պէտք է ամենքիս համար էլ անսասան լինէր որպէս սրբութիւն, և ով որ այդ բանի մէջ մեզ հակառակ էր գնում, նա մեր թշնամին էր։ Դուցէ մեր սիրածն այն չէր, որ արդարև լաւ է, բայց չէ՞ որ մենք քսանվեցս հոգի էինք, ուստի և միշտ ուզում էինք, որ այն, ինչ որ մեզ համար թանկագին է, սրբութիւն լինի նաև ուրիշների համար։

Մեր սէրն էլ նոյնքան ծանր է, որքան և

ատելութիւնը... և, գուցէ, հէնց այդ պատճառով էլ մի քանի մեծամիտներ պնդում են, թէ մեր ատելութիւնն աւելի գովասա է իրենց համար, քան թէ մեր սէրը...։ Բայց եթէ այդպէս է, ապա ինչու ուրեմն չեն խոյս տալիս մեզանից։

Մեր աղան բացի բոկեղ պատրաստելու գործարանից ունէր նաև շաքարահացի գործարան. դա միևնոյն տան մէջ էր գտնուած և մեր փոսից միայն մի պատով էր բաժանուած. բայց հացագործները—դրանք չորս հոգի էին—մեզանից հեռու էին մնում գալիս՝ իրենց աշխատանքը մերինից ադնիւ կարծելով, ուստի և նրանք իրենք իրենց մեզանից բարձր համարելով՝ մեր արհեստանոցը ոչ չէին ընդունում, իսկ բակում մեզ հանդիպելիս՝ արհամարհանքով վրաներս էին ծիծաղում. մենք էլ նրանց մօտ չէինք գնում,—այդ ասենք մեր աղան էր արգելել, վախենալով թէ մի գուցէ անոյշ հացերից գողանանք։ Մենք հացագործներին չէինք սիրում, որովհետև նախանձում էինք. նրանց աշխատանքը մերինից թեթև էր, վարձն աւելի, կերակուրներն աւելի լաւ, գործարանն ընդարձակ, պայծառ, իսկ իրենք էլ

խիստ մաքուր, առողջ. իսկ այդ մեզ համար զզուելի էր թւում։ Մինչդեռ մենք, ընդհակառակն, ամենքս էլ մի տեսակ գեղնած էինք, մաշուած. մեզանից երեքը սիֆիլիս ունէին, մի քանիսը՝ քոս, մէկը ոսկրացաւից բոլորովին ծռմռուած էր։ Հացագործները տոներին ու աշխատանքից ազատ միջոցին հագնում էին պիջակ, ճրճռան կօշիկ, երկուսը հարմոն ունէին և ամենքն էլ զբօսնելու համար քաղաքային պարտէզ գնում. մինչդեռ մեր հագինն ինչ-որ ազատոտ ցնցոտիներ էին, ոտքներիս՝ ուրեխ կամ հին ոտնաման. ոստիկանութիւնը մեզ քաղաքային պարտէզ չէր թողնում։ Էլ կարող էինք հացթուխներին սիրել։

Եւ ահա մի անգամ իմանում ենք, որ նրանց հաց թխողը հարբել է, աղան նրան դուրս է արել ու տեղն ուրիշը բռնել, որ այդ ուրիշը ղինուոր է, հագնում է տալասէ ժիլետ և ոսկէ շղթայով ժամացոյց բանեցնում։ Հետաքրքրւում էինք տեսնելու այդ պճնասէրին և, յուսալով թէ կը տեսնենք, մենք իրար ետևից, շարունակ բակն էինք դուրս գալիս։

Բայց նա ինքը եկաւ մեր արհեստանոցը։ Ոտքով խփեց դռանը, բաց արաւ և, բաց էլ թողնելով, ժպտալով կանգնեց շեմքում ու ասաց մեզ.

—Բարի աջողում։ Բարով ձեզ, տղերք։

Ցուրտ օդը, թանձր մուգ ամպի նման

դռնից ներս խուժելով, ոլորուում էր նրա ոտների տակ, իսկ նա շեմքում կանգնած վերևից դէպի ցած նայում էր մեզ, և նրա գեղեցիկ ոլորած գեղձան բեխերի տակ փայլում էին խոշոր, գեղին ատամները: Նրա ժիլեթը արդարև մի տառանձին տեսակի էր՝—կաստրոզոյն, ծաղկակար, ամբողջապէս փայլուն. իսկ կոճակները մի տեսակ կարմիր քարից էին: Ղլթայ էլ ունէր ..:

Գեղեցիկ տղամարդ էր այդ զինուորը, բարձր հասակով, առողջ, կարմիր թշերով, և նրա խոշոր, պայծառ աչքերն էլ անոյշ նայուածք ունէին՝ փաղաքուշ ու պարզ: Գլխին ծածկել էր պինդ օսլայած գլխոց, իսկ մաքուր, անարատ գոգնոցի տակից երևում էին նոր ձեի, փայլուն մաքրած կօշկի սուր քթերը:

Մեր թխողը յարգանքով խնդրեց, որ դուռը փակի. նորեկն առանց շտապելու կատարեց այդ և սկսեց աղայի մասին մեզ հարց ու փորձ անել: Մենք միմեանց բերանից խլելով սկսեցինք պատմել, որ մեր աղան թոկից փախած, սրիկայ, չարագործ, մարդու հոգի հանող մէկն է, պատմեցինք այն ամենը, ինչ որ կարելի էր և պէտք էր ասել աղայի մասին. բայց այդ ասածներս կարելի չէ այստեղ գրի անցկացնել:

Զինուորը լսում էր, բեխերը շարժում ու

մեզմ, պայծառ հայեացքով մեզ նայում:

—Ինչպէս տեսնում եմ, էստեղ շատ աղջկերք կան...,—ասաց նա յանկարծ:

Մեզանից ոմանք յարգանքով ծիծաղեցին, ոմանք քթի ու մուրթերը հաճելի կերպով ծռմռեցին, մէկն էլ բացատրեց, թէ այստեղ ինը աղջիկ կայ:

—Օգտուում էք,—հարցրեց զինուորը և աչքով արաւ:

Մենք նորից ծիծաղեցինք, բայց ցած ձայնով ու կոտրուած...: Մեզանից շատերը կուզէին նոյնպիսի կտրիճ մարդ թուալ, ինչպէս որ զինուորն էր, բայց այդ բանն անել ոչ ոք չգիտէր, ոչ ոք էլ կարող չէր: Մէկը խոստովանուեց այդ՝ ասելով.

—Ի՞նչ մեր բանն է...

—Հա, այդ ձեր բանը չէ,—վատահօրէն ասաց զինուորը ուշադիր աչքով մեզ նայելով:—Դուք ինչ-որ... էն չէք...: Կերպարանքներդ էնպէս չի... կարգին մարդու նման...: Իսկ կին ասածդ՝ տղամարդու կերպարանքին է նայում: Նա ուզում է, որ կազմուածքդ շնորհքով լինի... որ ամեն բան կարգին: Մէկ էլ նա շատ է սիրում ոյժ...: Այսպիսի ձեռք ունենայ, ա՛յ:

Զինուորն աջ գրպանից հանեց ձեռքը, որ մինչև արմուկը քշտած, մերկացրած էր, և ցոյց տուեց մեզ...: Ձեռքը սպիտակ էր, ուժեղ, փայլուն, ոսկեգոյն մազով ծածկուած:

ՄԵՏ ԿՍՆ ԳՐԱԴԱՐԱՆ
ГСС Библиотека
ZUUՈ-Арм.ССР
Ի. ԿՄ
Ա. Մոսինյան
ИНСТИТУТА
Академии Наук
СССР

—Ոտքը, կուրծքը. պէտք է ամենքն էլ պինդ լինին...: Մէկ էլ, որ մարդս կարգին հագնուած լինի... ոնց որ սաղ կը դայ...: Ա՜յ, ինձ սիրում են կանայք: Ես նրանց չեմ կանչում, չեմ հրապուրում. իրանք՝ օխտը միասին են ճտով ընկնում...:

Նա նստեց Ջուալով ալիւրի վրայ և երկար պատմում էր, թէ ինչպէս են կանայք նրան սիրում և թէ ինչպէս է ինքը քաջութեամբ վարւում հետները: Երբ որ նա գնաց, և դուռը ճռռալով նրա ետեւից փակուեց, մենք երկար ժամանակ լուռ միայն էինք անում նրա և նրա պատմածների վրայ: Ապա յանկարծ ամենքս էլ սկսեցինք միաժամանակ խօսել, և բանից երևաց, որ նա ամենքիս էլ դիւր էր եկել: Ի՜նչ պարզ ու պատուական մարդ է. եկաւ, նստեց, զրոյց արաւ: Ոչ ոք մեզ մօտ չէր գալիս, ոչ ոք մեզ հետ այսպէս ընկերաբար չէր խօսում...: Եւ մենք շարունակ խօսում էինք նրա վրայ և զուշակում ապագայում ունենալիք աջողութիւնը դերձակուհիների մէջ, որոնք բակում մեզ հանդիպելիս կամ վիրաւորական ձևով շրթունքները հուպ տուած ճանապարհն էին ծռում ու մեզանից հեռու անց կենում, կամ ուղղակի մեր վրայ էին գալիս, ասես թէ նրանց ճանապարհի վրայ մենք սկի կանգնած էլ չլինէինք: Մինչդեռ մենք միշտ հրճւում էինք նրանց տեսնելով թէ բակում, և

թէ մեր պատուհանների առաջով անցնելիս՝ ձմեռը մի տեսակ առանձին գլխարկ ու մուշտակ հագած, իսկ ամառը ծաղկաւոր փեղոյրներ ծածկած ու ձեռներին զոյնզոյն հովանոցներ բռնած: Սակայն մեր մէջ այդ աղջկերանց մասին այնպիսի բաներ էինք խօսում, որ եթէ լսէին, ամենքն էլ ամօթից ու վիրաւորանքից կը կատաղէին...:

—Վախեմ թէ, տղերք, Տանիւշկային էլ... փչացնի,— յանկարծ մտախոհութեամբ ասաց Թխողը:

Մենք ամենքս էլ, այդ խօսքերից շշմած, լռեցինք: Տանիային մտահան էինք արել. զինուորը իւր խոշոր, գեղեցիկ պատկերով կարծես նրան ծածկել էր մեր աչքից: Ցեսոյ աղմկալի վէճ սկսուեց. ոմանք ասում էին, թէ Տանիան իրեն այդտեղը չի հասցնիլ. ուրիշները պնդում էին, թէ նա զինուորին կարող չէ դիմադրել. ուրիշներն էլ, վերջապէս, առաջարկում էին, որ եթէ զինուորը Տանիայի կողից ընկնելու լինի, նրա ոտքները ջարդենք: Եւ, վերջ ի վերջոյ, վճռեցինք բոլորս էլ հետևել զինուորին ու Տանիային, զգուշացնել աղջկանը, որ հեռու կենայ զինուորից...: Այդ բանը մեր վէճին վերջ դրեց:

Մէկ ամսի չափ անցած կը լինէր. զինուորը հաց էր թխում, աղջկերանց հետ քէֆ անում, շուտ-շուտ մեր գործարանը մանում, բայց աղջկերանց հրապուրելու մասին խօսք չէր բաց անում, հապա միայն բեխերն էր ոլորում ու ախորժանքով շրթունքները լզմըզում։

Տանիան ամեն առաւօտ գալիս էր բոկեղներ ստանալու և, ինչպէս միշտ, զուարթ, սիրուն, փաղաքուշ էր մեզ հետ։ Մենք փորձ արինք խօսք բանալու զինուորի վրայ. Տանիան «առղած աչքով հորթ» էր անուանում նրան և ուրիշ ծիծաղելի անուններ տալիս, և այդ բանը հանգստացնում էր մեզ։ Մենք պարծենում էինք մեր աղջկանով, երբ տեսնում էինք, թէ ինչպէս զերձակուհիները որ ասես չէին պոկ գալիս զինուորից։ Տանիայի դէպի նրան ունեցած յարաբերութիւնը կարծես թէ բարձրացնում էր մեզ ամենքիս, ու մենք էլ, կարծես նրա բռնած դիրքովն առաջնորդուած, սկսեցինք ինքներս էլ արհամարհանքով վերաբերուել դէպի զինուորը։ Եւ Տանիային աւելի սիրեցինք ու առաւօտներն աւելի ևս ուրախ ու բարեսրտութեամբ էինք դիմաւորում նրան։

Բայց մի անգամ զինուորը մեզ մօտ մի քիչ խմած եկաւ, նստեց ու սկսեց ծիծաղել. և երբ հարցրինք, թէ ինչի՞ է ծիծաղում, նա բացատրեց.

—Իմ պատճառովս երկու աղջիկ իրար միս կերան... Լիդկան ու Դրուշկան...։ Ո՞նց էին իրար այլանդակել, հը՞։ Հա-հա։ Մէկը միւսի ծամերից բռնած՝ միջանցքում գետին խփեց, վրան հեծաւ... հա-հա-հա։ Իրար քիթ ու մռութ չանկռատեցին, արիւնլուկ արին... շորերը պատռատեցին...։ Ծիծաղից կոտորուելու բան էր։ Հեմ հասկանում, թէ ինչու էս կանայք չեն կարողանում կարգին կռուել։ Ինչի՞ են իրար չանկռատում, հը՞։

Նա ուրախ-զուարթ, առողջ, մաքուր կերպարանքով, նստած էր նստարանի վրայ ու շարունակ ծիծաղում։ Մենք լուռ էինք։ Զգիտեմ ինչու այս անգամ նա մեզ անհաճոյ էր։

—Հէ, ախպէր, կանանց մասին բաղդս բաց է, հը՞։ Ծիծաղելու բան։ Մէկ որ աչքով արի՝ պրծաւ։ Հը՛։

Նրա վայլուն մազերով ծածկուած ձեռքերը բարձրացան և նորից ծնկների վրայ ընկան ու բարձրաձայն շլմփացրին։ Եւ նա մի այնպիսի հաճելի-զարմացած կերպով էր նայում մեզ, որ ասես թէ ճիշտ որ ինքն էլ չի հասկանում, թէ ինչու կանանց վերաբերմամբ իւր բաղդն այդքան բանուկ էր։ Նրա հաստ, կարմրած մռութը ինքնագոհ ու երջանիկ կերպով պսպղում էր, և նա շարունակ ախորժանքով լպստում էր իւր շրթունքները։

Մեր հացթուխը թխումն ուժով ու զայ-

բացած շրխկացրեց հնոցին ու յանկարծ ծաղրելով ասաց.

—Բանը ս. Խաչի ուլը չէ, բանը զատկի դառն է...:

—Էդ ինձ ես ասում,—հարցրեց զինուորը:

—Հա, քեզ...:

—Ի՞նչ ես ուզում ասել:

—Ոչինչ... ասացի, պրծաւ:

—Չէ, կաց։ Ի՞նչ է ասածդ։ Ի՞նչ դառը, ինչ բան:

Մեր փունջին լուռ էր և միայն արագարագ թիակը շարժում,—մէկ փուռն ձգում խաչած բոկեղները և մէկ փռնից հանում պատրաստները և աղմուկով շպրտում յատակի վրայ, երեխաների առաջ, որոնք կապերի վրայ էին անցկացնում բոկեղները: Նա կարծես թէ զինուորին էլ, նրա հետ սկսած խօսակցութիւնն էլ մոռացած լինէր արդէն: Բայց զինուորը յանկարծ մի տեսակ անհանգստութեան մէջ ընկաւ: Նա ոտքի ելաւ և մօտեցաւ փռանը, չմտածելով որ կարող է կրծքին առնել թիակի կոթը, որ ջղաձգաբար շարժւում էր օդի մէջ:

—Չէ, դու մի ինձ ասես՝ ոմ է: Դու ինձ վիրաւորեցիր...: Ե՞ս: Իմ ձեռքից ոչ-ով չի պրծնի, չէ-է: Իսկ դու ինձ էնպիսի անպատիւ խօսքեր ես ասում, որ...

Եւ յիրաւի, նա իսկ որ վիրաւորուած էր թւում: Ինչպէս երևում է, նա բացի կանանց մոլորեցնելու շնորհքից չունէր մի այնպիսի բան, որի համար ինքն իրեն յարգէր: Դուցէ այս շնորհքից զատ ոչ մի կենդանի բան չկար նրա մէջ, և միայն այդ շնորհքն էր, որ նրան զգալ էր տալիս իւր կենդանի մարդ լինելը:

Հօ կան մարդիկ, որոնց համար կեանքի մէջ ամենաթանկագինն ու ամենալաւն իրենց հոգու կամ մարմնի մի որևիցէ հիւանդութիւնն է կազմում: Նրանք իրենց բոլոր կեանքում փայփայում են այդ արատը և դրանով են կենդանի մնում. նրանք այդ արատի երեսից տանջուելով հանդերձ՝ դրանով էլ սնւում են. նրանք դրա դէմ դանդաւում են ուրիշներին և դրանով էլ իրենց վրայ դարձնում մօտիկ անձերի ուշադրութիւնը: Այդ բանի համար նրանք մարդկանցից իբր տուրք ստանում են նրանց համակրութիւնը, և բացի դրանից՝ էլ ոչինչ չունին: Վերցրէք նրանցից այդ հիւանդութիւնը, այդ արատը, բժշկեցէք նրանց, և նրանք կանբաղդանան, որովհետև կը զրկուեն կեանքի միակ միջոցից. նրանք այն ժամանակ մի դատարկ բան կը դառնան: Երբեմն մարդուս կեանքն այն աստիճանի աղքատ է լինում, որ ակամայ ստիպուած է գնահատել իր արատը և դրանով ապրել. ուղղա-

կի կարելի է ասել, որ երբեմն մարդիկ ձանձրոյթից են արատաւոր դառնում:

Զինուորը վիրաւորուեց և մեր հացթուխի վրայ գնալով ոռնում էր.

—Չէ, պիտի ասես, ով է:

—Ասեմ,—յանկարծ դարձաւ նրան հացթուխը:

—Հը՛:

—Տանիային ճանաչում ես:

—Յետոյ:

—Էլ ինչ յետոյ: Հապա փորձի...

—Ե՞ս:

—Դու:

—Նրան: Դա ինձ համար հէչ բան չի:

—Տեսնենք:

—Կը տեսնես: Հ-հա:

—Նա քեզ...

—Մի ամիս ժամանակ:

—Շատ մեծախօսն ես, զինուոր:

—Երկու շաբաթ միայն: Ո՞վ: Տանիան: Հէչ բան չի...

—Դէ հեռու գնա... խանգարում ես:

—Երկու շաբաթ՝ ու պրծաւ: Այ դու...

—Ասում եմ՝ հեռացիր:

Մեր հացթուխը յանկարծ կատաղեց և թիակը վերցրեց, որ խփի: Զինուորը զարմացած յետ-յետ քաշուեց, նայեց մեզ, լռեց, և

կամաց, շարագուշակ կերպով ասաց. «Դէ լաւ» —ու գնաց:

Վէճի միջոցին, վէճով հետաքրքրուած, ամենքս էլ լուռ էինք: Բայց զինուորի գնալուց յետոյ կենդանի, բարձր զրոյց ու աղմուկ բարձրացաւ մեր մէջ:

Մէկը հացթուխին ասաց.

—Հէչ բան չէր արածդ, Պաւէլ:

—Դու քո առաջիդ ապուրը կեր,—կատաղաբար պատասխանեց նա:

Զգում էինք, որ զինուորի ինքնասիրութիւնը սաստիկ վիրաւորուած էր, և Տանիային վտանգ է սպառնում: Այդ զգում էինք և միևնոյն ժամանակ մի ջերմ, հաճելի հետաքրքրութիւն պաշարել էր մեզ, թէ ինչ է լինելու: Արդեօք Տանիան կը դիմանայ զինուորի հրապոյրին: Եւ համարեա ամենքս էլ վստահօրէն կանչում էինք.

—Տանիկան: Ի հարկէ կը դիմանայ: Նրան ձեռք ձգելը հեշտ բան չի:

Սաստիկ ուզում էինք փորձել մեր կուռքի հաստատամտութիւնը. մենք լարուած կերպով միմեանց ապացուցանում էինք, որ մեր կուռքը շատ պինդ կուռք է և այդ ընդհարումից յաղթող դուրս կը գայ: Մեզ, վերջապէս, սկսեց այնպէս թուալ, թէ զինուորին դեռ քիչ էինք զրդռել, որ նա կարող էր այս վէճը մոռանալ, և թէ հարկաւոր էր մի լաւ խայթել բան ինքնասիրութիւնը: Այդ օրուանից սկսե-

ցինք մի առանձին, լարուած-նեարդային կեանք անցկացնել. մենք դեռ այդպէս ապրած չէինք: Ամբողջ օրը վիճում էինք իրար հետ. կարծես թէ աւելի խելօքացած՝ սկսեցինք շատ և աւելի լաւ խօսել: Մեզ թւում էր, թէ մենք ինչ-որ խաղ ենք խաղում և դրաղ ենք եկել սատանայի հետ, և մեր դրաղը Տանիան է: Եւ երբ որ հացթուխներից իմացանք, որ զինուորն սկսել է Տանիայի ետևից ընկնել, մենք մի այնպիսի զգայնական-հաճելի դրութեան մէջ էինք, և մեր կեանքն այնքան շահագրգիռ էր դարձել, որ մինչև անդամ չնկատեցինք, թէ ինչպէս մեր աղան, մեր գրգիռից օգտուելով, տասնեհօրս պուդ խմորի աշխատանք էր աւելացրել: Մենք նոյն իսկ աշխատանքից չէինք էլ յոգնում: Ամբողջ օրը Տանիայի անունը մեր բերանն էր: Եւ ամեն առաւօտ մենք նրան մի առանձին անհամբերութեամբ էինք սպասում: Երբեմն մեզ թւում էր, թէ նա կը մտնի մեզ մօտ, բայց սա այլևս այն, առաջուայ Տանիան չի լինիլ, հապա մի ուրիշը:

Սակայն տեղի ունեցած վէճի մասին նրան ոչինչ չէինք ասում: Ոչինչ չէինք հարցնում և դարձեալ առաջուայ նման սիրով ու լաւ էինք վերաբերւում դէպի նա: Բայց այս յարաբերութեան մէջ արդէն մեր դէպի Տանիան տածած նախկին զգացմունքին մի նոր, օտար բան էր խառնուել, և այդ նորը՝ սուր հետաքրքրութիւնն էր, սուր ու սառն՝ որպէս

պողպատէ դանակ...:

—Տղերք: Այսօր ժամանակն է,—մի անդամ առաւօտեան ասաց հացթուխը գործի կանգնելով:

Մենք առանց նրա յիշեցնելուն էլ լաւ գիտէինք այդ, բայց էլի սթափուեցինք:

—Մտիկ տուէք Տանիային... էս բոպէիս կը գայ,—շարունակեց հացթուխը:

Մէկը ցաւակցաբար բացականչեց.

—Մտիկ տալով ինչ դուրս կը գայ. բան կը տեսնես:

Եւ դարձեալ կենդանի, աղմկալից վէճ սկսեցինք: Վերջապէս այսօր կիմանանք, թէ որքան մաքուր ու կեղտի համար անմատչելի է այն անօթը, որի մէջ ամփոփել էինք մեր ամենալաւ զգացմունքը: Այդ առաւօտ ասես թէ միանգամից և առաջին անդամ զգացինք, որ մեծ խաղ էր խաղացածներս, որ մեր կուռքի մաքրութեան այս փորձը կարող էր նրան ոչնչացնել մեզ համար: Մենք այդ բոլոր օրերը լսում էինք, թէ զինուորը յամառութեամբ և շարունակ հետամուտ է լինում Տանիային, բայց մեզանից ոչ ոք չհարցրեց Տանիային, թէ նա ինչպէս է վերաբերւում զէպի զինուորը: Իսկ նա շարունակում էր ամենայն օր կանոնաւոր կերպով գալ բոկեղ սատանալու և էլի այն էր, ինչ որ միշտ:

Եւ շուտով այդ օրն էլ լսեցինք նրա ձայնը.

—Կալանաւորներ։ Եկայ...

Մենք չտապեցինք նրան ներս առնելու և, երբ որ մտաւ, սովորականին հակառակ նրան լուութեամբ ընդունեցինք։ Աչքներս չորս բաց արած նրան նայելով չէինք իմանում, թէ ինչ խօսէինք հետը, ինչ հարցնէինք։ Եւ լուռ, մռայլ կերպարանքով խոնարհ էինք նրա առաջ։ Ըստ երևոյթին՝ նա զարմացած էր այս անսովոր ընդունելութեան վրայ. և յանկարծ տեսանք, որ նա սպրդնեց, անհանգստացաւ, կանգնած տեղը մի տեսակ տրոր-տրոր եկաւ և ճնշուած ձայնով հարցրեց.

—Ինչու՞ էք... այսպէս։

—Հապա դու,—մռայլած նկատեց հայթուխն առանց աչքը վրայից հեռացնելու։

—Ես ինչ։

—Ո-չինչ։

—Դէ, շուտով բոկեղ տուէք...։

Նա առաջ երբէք մեզ չէր շտապեցնում...։

—Կը հասնես. շտապելու բան չկայ.—ասաց հայթուխն առանց շարժուելու և առանց աչքը վրայից հեռացնելու։

Այն ժամանակ նա յանկարծ շուռ եկաւ և դրան մէջ անհետացաւ։

Հայթուխը վեր առաւ թիակը և երեսը փռանը դարձնելով՝ հանդարտ ձայնով ասաց.

—Ուրեմն բանը պրծել է...։ Այ քեզ զինուոր... հարամզադա... ցած...։

Մենք, ոչխարի հօտի նման, իրար հրըհրելով մօտեցանք սեղանին, սուս ու փուս նստեցինք ու սկսեցինք ծոյլ-ծոյլ աշխատել։ Զուտով մէկն ասաց.

—Ով է իմանում, գուցէ դեռ...։

—Դէ, դէ։ Դուս տու,—կանչեց հայթուխը։

Ամենքս էլ գիտէինք, որ նա խելօք մարդ էր, ամենքիցս խելօք։ Եւ նրա բացականչութիւնից հասկացանք, որ զինուորը յաղթել է...։ Մենք տխուր էինք և անհանգիստ...։

Ժամը տասնևերկուսին—ճաշի ժամին—զինուորը եկաւ։ Ըստ սովորականին նա մաքուր ու պճնուած էր և—ինչպէս միշտ—ուղիղ մեր աչքին էր նայում։ Իսկ մենք դժուարանում էինք նրան մտիկ տալու։

—Դէ, տղէք, կուզէք հիմի զինուորի զոչաղութիւնը տեսնել,—ասաց նա պարծենկոտ ժպիտով.—որ կուզէք՝ դուրս եկէք նախասենեակ ու տախտակների ճեղքերից մտիկ տուէք... հասկացա՞ք։

Մենք դուրս եկանք և, իրար վրայ ընկած, պինդ կպանք նախասենեակի տախտակէ պատի ճեղքերին, որ դէպի բակն էր դուրս գալիս։ Երկար չսպասեցինք...։ Զուտով Տանիան, շտապ-շտապ, հոգսալի դէմքով, կիսահալ ձիւնի ու ցեխի լճակների վրայից թռչկոտալով անցաւ բակի միջով։ Նա անհետացաւ նկուղի դրան մէջ։ Յետոյ, առանց շտապելու

և շվվացնելով, այդտեղ գնաց և գինուորը։ Նա ձեռները գրպանները էր դրել, իսկ բեխերը շարժուում էին...։

Անձրև էր գալիս, և տեսնում էինք, թէ ինչպէս անձրևի կաթիլները ընկնում էին լճակների մէջ, և լճակները նրանց հարուածներից կնճռոտում։ Խոնաւ, մառախլապատ օր էր, սաստիկ ձանձրալի օր։ Կաուրները դեռ ձիւն էր նստած, իսկ երկրի վրայ երևում էին ցեխի սև բծեր։ Եւ կաուրների ձիւնն էլ ծածկուած էր մոխրագոյն, աղտոտ շերտով։ Դանդաղ-դանդաղ էր գալիս անձրևը և թախծալի հնչում։ Մրսում էինք, և անհաճոյ էր սպասելը...։

Նկուղից առաջ գինուորը դուրս եկաւ. նա դանդաղ քայլերով, բեխերը շարժելով, ձեռները գրպանը՝ իւր մշտական կերպարանքով, անցաւ բակը։

Յետոյ դուրս եկաւ Տանիան։ Նրա աչքերը... նրա աչքերը փայլում էին ուրախ ու երջանիկ, իսկ շրթունքները ժպտում էին։ Եւ գնում էր նա, կարծես քնի մէջ լինէր, օրօրուելով, անհասատատ քայլերով...։

Մենք չկարողացանք անվրդով կերպով տանել այդ բանը։ Բոլորս միասին դէպի դուռը վազեցինք, դուրս թռանք բակը և սկսեցինք շարախնդաց, բարձր, վայրենի կերպով շվվացնել, գոռալ վրան։

Նա որ մեզ տեսաւ, ցնցուեց և արձանացած մնաց կանգնած ցեխի մէջ։ Մենք շրջապատել էինք նրան և շարախնդութեամբ, առանց դադրումի փիս-փիս խօսքերով հայհոյում, նրան անպատկառ բաներ ասում։

Մենք այս անում էինք առանց շտապելու և ոչ-բարձր ձայնով, որովհետև տեսնում էինք, որ գնալու տեղ չունի, որ չորս կողմը բռնել ենք և ինչքան սրտներս ուզի՝ կարող ենք ծաղրել, վրան ծիծաղել։ Զգիտեմ ինչու, բայց մենք նրան չծեծեցինք։ Նա մեր մէջ կանգնած էր և, մեր վիրաւորանքները լսելով, գլուխը մէկ դէս էր շուռ տալիս, մէկ՝ դէն։ Իսկ մենք՝ առաւել շատ, առաւել զօրեղ խօսքի ցեխ ու թոյն էինք շաղ տալիս գլխին։

Նրա երեսի գոյնը թռաւ։ Նրա կապոյտ, մի ըսպէ առաջ երջանիկ աչքերը լայն-լայն բաց եղան, կուրծքը ծանր շունչ էր առնում, և շրթունքները դողդողում էին։

Իսկ մենք նրան շրջապատած վրէժ էինք լուծում, որովհետև նա մեզ կողոպտել էր։ Նա պատկանում էր մեզ, մենք նրա վրայ մսխել էինք այն, ինչ որ մեր ամենալաւն էր, և թէպէտ այդ ամենալաւն աղքատի փշրանքներ էին, բայց մենք քսանվեց հոգի էինք, իսկ նա՝ մէկ, ուստի և ինչքան էլ տանջէինք, դեռ քիչ էր նրան։ Ինչպիսի՜ վիրաւորանքներ էինք հասցնում նրան...։ Նա լուռ էր, վայրի հայեացքով շարունակ նայում էր մեզ և սաղ մարմնով դողում։

Մենք գոռում էինք, մռնչում, ծիծաղում...։

ԼՈՒՌ-ԱՄԻ ԳԻ

Չգիտեմ որտեղից ուրիշ մարդիկ էլ եկան, միացան մեզ...: Մեզանից մէկը քաշեց Ցանկայի զգեստի թևից...:

Ցանկարծ նրա աչքերը փայլատակեցին. նա առանց շտապելու ձեռները գլխին տարաւ և, մազերն ուղղելիս, բարձր, բայց հանդարտութեամբ ասաց ուղիղ մեր երեսին.

—Վայ դուք անբաղդ կալանաւորներ...

Եւ նա քայլեց ուղղակի մեզ վրայ, այնպէս քայլեց, հէնց գիտենաս մենք ամենևին նրա առջևը կանգնած չլինէինք, ասես թէ մենք նրա ճամբան կտրած չլինէինք: Եւ այդ պատճառով էլ ճշմարիտ որ մեզանից ոչ ոք նրա ճանապարհը չբռնեց:

Իսկ մեր շրջանից դուրս գալուց յետոյ նա, առանց ետևը դառնալու, միևնոյն կերպով բարձր ու աննկարագրելի արհամարհանքով ասաց.

—Այ դուք սինլքոր... գարշելիներ...:

Եւ գնաց:

Իսկ մենք մնացինք բակի մէջ, ցեխում, անձրևի և անարև թխպած երկնքի տակ...:

Ապա մենք էլ քաշուեցինք մեր խոնաւ քարէ փոսը:

Առաջուայ նման երբէք արևը պատուհանից ներս չէր թափանցում մեր աշխատանոցը. իսկ Ցանկան երբէք մէկ էլ մեր շեմքը ոտք չկոխեց...:

ՊԵՏ ԿԱՆ ԳՐ. ԴԻՐԱՆ
ГСС Библиотека
ՀՍՍՌ-Արա ՍՍՌ
Ս. ՄԱ Մ ՄՐՇԱՅԻՆ

Հայաստանի Ազգային գրադարան
NL0438348

10.803

ՄԱ
ԱՓ
ՄՄ

БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ВОСТОКОВЕДЕНИЯ
Академии Наук
СССР

ԼՈՅՍ ՏԵՍԱՆ

1. ԹԱԹԱԽՄԱՆ ԳԻՇԵՐԸ, Լէօի, գինը 5 կ.
2. ՔՍԱՆԵԻՎԵՑ ՏՂԱՄԱՐԴԵՒ ՄԻ ԱՂՋԻԿ, Մակսիմ Գօյրկու, գինը. . 5 կ.